

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀՈՒ ԽՈՍՔԸ ԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ

Թանկագին Վեհափառ,

Սկսած այն օրից, երբ Դուք բարձրացել եք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվիրական գահին, մենք բազմիցս բախտ ենք ունեցել շնորհավորելու Ձեր տարելիցները, և այդ շնորհավորանքները լցված են եղել անխառն ու միաստարր ուրախությամբ, առանց դառնության, առանց ստվերի: Մենք Ձեզ համարել ենք երջանիկ կաթողիկոս, որովհետև Ձեր գահակալությունը համընկել էր համեմատաբար երջանիկ ժամանակների, երբ, ճիշտ է, դանդաղորեն ցրվում էին Ս. Էջմիածնի վրա 1920 թվականից ի վեր կուտակված ամպերը, և Դուք բախտավորություն ունեիք ի բնե Ձեր մեջ եղած կարողությունները իրացնել լիովին, ամրացնել մինչ այդ երերուն դարձած Մայր Աթոռը, բեկոր-բեկոր հավաքել ու վերականգնել մեր ժողովրդի հոգեկանությունը սնող ու պահպանող Եկեղեցին՝ մեր հավատի տունը:

Ձեզ, Վեհափառ Տեր, վիճակվեց տեսնել հայոց նորօրյա պետականության հիմնադրեքը, որին բերեցիք Ձեր հայրապետական օրհնությունը և դրանով իսկ պետական այրերի հետ միասին բաժանեցիք այդ ճակատագրական պահի պատիվն ու պատասխանատվությունը:

Ծանր է հիմա մեր հայրենիքի վիճակը, և նույն համեմատությամբ ծանր է Ձեր վաստակաբեկ ուսերին իջած բեռը, բազմաթիվ ու բազմազան: Բուստի այսօր մենք Ձեր 85-րդ տարելիցը շնորհավորում ենք ոչ առաջվա հանդիսանքային թեթևաշունչ ուրախությամբ, այլ խորապես հասկանալով Ձեր հոգու տագնապները ու ներհակությունները, շնորհավորում ենք նույն սիրով ու որդիական ակնածանքով և աղոթում, որ դեռ երկար մնա Ձեր հովանավոր Աջը Հայաստան աշխարհի վրա, որ որքան կարելի է շուտ վերականգնվի Ձեր հոգու խաղաղությունը, և Դուք նույն իմաստուն հանդարտությամբ, լույսն ու լուսավորը տեսնելու Ձեր պայծառամտությամբ մեզ անելիություն ու հավատ ներշնչեք հայ ժողովրդի հաստատուն ապագայի նկատմամբ:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Երևան,
1993 թ. սեպտեմբեր